Հաստատված է՝ 11. 12. 2023թ.
Գավառի N5 հիմնական դպրոցի տնօրեն՝

/ Ա. Ռ. Վարդանյան/

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Թեմա՝ Հայկական ժողովրդական նվագարաններ՝ քանոն և դհոլ

Ուսուցչուհի՝ Անահիտ Ռուբինյան

2023-2024

7-րդ դասարանում <<Երաժշտություն>> առարկայից իրականացվեց նախագծային աշխատանք <<Հայկական ժողովրդական նվագարաններ՝ քանոն և դհոլ>> թեմայով:

Նախագծային աշխատանքն իրականացրին 4 աշակերտ՝

1. Լիլյա Հարոյան
2. Լիլիթ Իսոյան
3. Գառնիկ Կարապետյան
4. Նարեկ Մանուկյան

Ուսումնական նախագիծը մոնոառարկայական է, կարճաժամկետ՝ 3 շաբաթ տևողությամբ /նոյեմբերի 24-ից մինչև դեկտեմբերի 8-ը/, ձևաչափը թիմային: Այն իրականացվեց 3 փուլով՝ նախապատրաստում, ընթացք և ամփոփում:

Նախապատրաստական փուլում սովորողները ընտրեցին թեման և սահմանեցին նպատակը, հիմնահարցերը: Ձևավորվեցին 2 աշխատանքային խմբեր, յուրաքանչյուր խումբ ստացավ իր առաջադրանքները:

2 խմբերը պետք է նախ հավաքագրյին նյութեր և տեղեկություններ համացանցից, գրքերից: 1-ին խումբը պետք է այցելեր Գավառի պետական երաժշտական քոլեջ և Երաժշտական դպրոց, իսկ 2-րդ խումբը՝ Արվեստի դպրոց և գրադարան: Աշխատանքի բաժանումը կատարելիս նկատի եմ ունեցել աշակերտների հետաքրքրությունները, հմտությունները ու կարողությունները:

2-րդ փուլ՝ ընթացք: Իսոյան Լիլիթը և Հարոյան Լիլյան, այցելեցին իմ ուղեկցությամբ Գավառի պետական երաժշտական քոլեջ և հարցազրույց վերցրին՝ ժողովրդական նվագարան բաժնի դասախոս Ռ. Միրիբյանից: Մեր զրուցակիցներն էին նաև նրա ուսանողներ Աստղիկը և Էլենը: Տիկին Միրբյանին տրվեցին բազմաթիվ հարցեր քանոնի կառուցվածքի, պատմության, քանոնի վարպետների մասին, զրուցեցին Գեղարքունիքի մարզում քանոնի տարածման մասին: Արդյունքում ունեցանք հետաքրքիր և բովանդակալից հարցազրույցի տեսանյութ: Հարցազրույցի ընթացքում Աստղիկը և Էլենը հանդես եկան քանոնի կատարումով: Ծանոթացան քոլեջի գործիքներին: Տիկին Միրիբյանը նաև անցկացրեց Լիլյաի և Լիլիթի համար վարպետության դաս:

Ինձ հետաքրքրեց մի հարց, որքան ժամանակ է հարկավոր, որ մարդ ով չի տիրապետում երաժշտական գործիքին կարողանա նվագել մի պարզ մեղեդի: Եվ խնդրելով տիկին Միրիբյանին Լիլիթին սովորեցնել մի պարզ մեղեդի և արդյունքում 30ր.-ում Լիլիթը կարողացավ նվագել <<Ֆորկա-ֆորկա>> ստեղծագործությունը և նաև իրեն նվագակցեց Լիլյան:

Լիլիթը և Լիլյան այցելեցին նաև Գավառի Երաժշտակա դպրոց, որտեղ հանդիպեցին քանոնի մասնագետ տիկին Մելոյանի հետ: Զրուցեցին և ծանոթացան քանոնի առանձնահատկություններին:

Կարապետյան Գառնիկը և Մանուկյան Նարեկը այցելեցին Գավառի Արվեստի դպրոց և զրուցեցին դհոլի մասնագետի հետ, ծանոթացան դասարանում եղած

դհոլներին: Այդ հաստատության աշակերտին սովորեցրին նվագել դհոլ, բացատրեցին հնարները և նստելաձևը: Գարիկը և Նարեկը այցելեցին նաև գրադարան դհոլի տեղեկությունների համար, սակայն շատ քիչ նյութեր կային այնտեղ: Այդ պատճառով ես տրամադրել եմ նյութեր դհոլի մասին:

Համացանցից հավաքագրեցին նյութեր և տեղեկություններ քանոնի և դհոլի մասին: Հետազոտական աշխատանքի ուսումնասիրումը, տեղեկության հավաքումը հիմնականում իրականացվում էր ոչ էական թերություններով: Առաջացած հարցերին անրադառնում էինք հենց այդ պահին և անգամ հանդիպումներից դուրս:

Հանդիպմանը կատարվեց հավաքված նյութերի վերանայում, ուղղորդում, քննարկում և վերջնական արդյունքների ստեղծում: Ի մի բերվեցին կրիչի վրա պահպանված տեսանյութերը: Աշակերտները հանդես եկան իրենց պատրաստած կատարումներով: Կատարվել է կատարողական տեխնիկայի ուղումներ: Բերվել է իդալական տեսքի իրենց կատարումները և պատրաստվեցին աշխատանքի պաշպանությանը սահիկաշարի և տեսահոլովակների տեսքով:

3-րդ փուլ՝ ամփոփում: Սովորողները ներկայացրին իրենց կատարած աշխատանքը սահիկաշարի և տեսանյութերի միջոցով: Հենց երաժշտական գործիքների վրա ցույց տրվեցին գործիքների կառուցվածքը և առանձնահատկությունները: Գարիկը և Նարեկը ցույց տվեցին դհոլի վրա հնարներ, ինչպես նաև հանդես եկան միասին դհոլի կատարումով: Լիլյան ցույց տվեց քանոնի հնարները և հանդես եկավ քանոնի <<Տոնական>> ստեղծագործության կատարումով: Լիլիթը և Լիլյան նվագեցին <<Ֆորկա-ֆորկա>> ստեղծագործությունը /Լիլիթը այն սովորել էր նախագծի ընթացքում, մինչև այդ նա չէր կարողանում նվագել քանոն/:

Աշխատանքի ընթացքում սովորողները ցուցաբերեցին ակտիվություն, հետաքրքրություն և նախաձեռնողականություն: Նրանք աշխատեցին իմ օգնությամբ և ինքնուրույն, դրսևորեցին համագործակցային հմտություններ: Աշխատանքի բովանդակությունը համապատասխանում է թեմային, այն ամբողջական է, պահպանված է կատարողական հմտությունները: Ամբողջովին հիմնված է պատմական փաստերի և ներկայիս վարպետների կատարած աշխատանքների վրա:

Աշխատանքի ընթացքում զարգացան սովորողների՝

- սովորել սովորելու կարողունակություն
- տնտեսական կարողունակություն
- լեզվական գրագիտություն և կարողունակություն
- մշակութային կարողունակություն
- թվային և մեդիա կարողունակություն

Նախագծի նպատակը իրատեսական է, չափելի և սովորողների հետ միասին հասանք մեր նպատակին՝

- ծանոթացանք հայկական ժողովրդական նվագարաններից՝ քանոնի և դհոլի ստեղծման պատմությանը:
- կարևորեցին հայ ազգային նվագարանների դերը հայկական մշակույթի մեջ:

- ծանոթացան երաժշտական գործիքների կառուցվածքին:
- գնահատեցին և ճանաչեցին քանոնի և դհոլի լավագույն վարպետներին և կարողացան համեմատել ներկա վարպետների հետ:
- բարելավեցին կատարողական հմտությունները:

Բոլոր 4 սովորողներն էլ գնահատվեցին 10 միավորանոց համակարգով:

Հարոյան Լիլյան, Իսոյան Լիլիթը և Գառնիկ Կարապետյանը գնահատվեցին <<9>> միավոր: Նրանք լիաժեք ընկալեցին թեմայի նպատակը և իրենց դերն ու առաջադրանքները: Կարողացան համագործակցել միմյանց հետ: Ճիշտ և արագ կատարում էին իրեն հանձնարարությունները: Մշակումը կատարում էին համապատասխան թեմային: Սահիկաշաարի պատրաստման ընթացքում հանդիպեցին դժվարության և օգնեցի ես: Դրա համար մեկ միավոր իջավ վերջնական գնահատականից: Իրենց խոսքը գրագետ էր, պահպանված էր տրամաբանական կապերը, ամբողջովին հասկանալի էր, պահելով տեսողական շփումը, ժեշտերի և մարմնի համապատասխան լեզուն: Առկա էր լիարժեք թիմային աշխատանք:

Նարեկ Մանուկյանը ստացավ <<7>> միավոր: Աշխատում էր բոլորի հետ: Նրա աշխատանքը ուներ մասնակի խմբագրման կարիք: Նարեկը ներկայացման ընթացքում ունեցավ թերություններ՝ կապված սահիկահանդեսը ներկայացնելու հետ: Խոսքը հասկանալի էր, բայց ձևակերպումներում կային էական թերություններ: